

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն Ուկագ:—Բարձրագոյն Բիսկրիպօ:—Այդ առիթներով:—Անկարգու-
քիւններ Մոսկուայում, Բագու եւ Պետերբուրգում:—Ձերնիզովեան ճան. գետն.
ճախագահի դիմումին պատասխանը:—Տափանուած ընկերութիւնների մասին
կարգադրութիւն:—Դէպքեր եւ կարգադրութիւններ կովկասում:—Մամուլի վերա-
բերեալ կարգադրութիւններ:—Պարսից բարեգործական ընկերութիւնը:—Ռուսաց
գրական ժողովրդ:—«Нос. Вреш»-ի մի մերկացումը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶ

Կառավարչական Սննատին՝ Պետական կարգի կատարելա-
գործման նախագծումների մասին:

Մեր Նախնիքների սրբազան աւանդների համաձայն, ան-
դադար խորհելով Աստուծոց Մեզ յանձնած պետութեան բարի-
քի մասին, Մենք, անփոփոխ պահպանելով կայսրութեան հիմ-
նական օրէնքները, կառավարելու նպատակը՝ համարում ենք
երկրի կարիքների մասին անխոնջ հոգատարութեան մէջ,
տարբերելով այն ամենը ինչ որ ռուս ժողովրդի շահերին
խկապէս համապատասխան է, ոչ սակաւ սխալ և անցողական
հանգումանքներով ներշնչուած ձգտումներին:

Իսկ երբ հասունացած է լինում այս կամ այն փոփոխու-
թեան կարիքը, Մենք անհրաժեշտ ենք համարում ձեռնարկել
նրա կատարման, նոյնիսկ եթէ նկատուած վերակազմութիւնը
պահանջէր օրէնսդրութեան մէջ էական նորմուծութիւններ
մտցնելու: Ձեռք կասկածում, որ այդպիսի ձեռնարկութիւնների
իրականացումը կ'ընդունուի համակրանքով Մեր հպատակների
բարեմիտ մասի կողմից, որ հայրենիքի իսկական բարգաւա-
ճումը տեսնում է՝ պետական հանգստութեան պահպանման և
ժողովրդի կարիքներին անընդհատ բաւարարութիւն տալու
մէջ:

Մեր հոգսերից գլխաւորը համարելով մեղանում ամե-
նաբաղմաթիւ գիւղացիական դասակարգի կացութեան ամենա-
լաւ վերաշինութիւնը, Մենք նկատում ենք, որ, մեր կանխա-

ցուցումները համաձայն, այդ գործն արդէն ինթարկուած է բազմակողմանի քննութեան. ներքին գործոց մինիստրութեան սկզբնական ենթադրութիւնները մանրամասն, տեղն ու տեղը կատարուած զննութեան հետ միասին, այժմ բարձր կառավարութեան ամենափորձառու անձերից կազմուած առանձին խորհրդածութեան մէջ ուսումնասիրուած են գիւղացիական կեանքի վերաշինութեան ամենակարեւոր հարցերը այն տեղեկութիւնների և կարծիքների հիման վրայ, որ յայտնուել են տեղական կոմիտետներում՝ գիւղատնտեսական արդիւնաբերութեան ընդհանուր կարիքների քննութեան ժամանակ: Մինք հրամայում ենք որ այդ աշխատութիւնները միութեան բերէին՝ գիւղացիների մասին օրէնքները կայարութեան ընդհանուր օրէնսդրութեան հետ, դիւրացնելով այն հարցը թէ ինչպէս հաստատապէս ապահովել այդ դասակարգի անձերին—օգտուելու Ազատարար-Թագաւորի կողմից նրանց նկատմամբ ընդունուած «լիաիրաւատէր ազատ գիւղական բնակիչներ» դրութիւնից:

Ապա տեսութեան առնելով ժողովրդային միւս կարիքների ընդարձակ աշխարհը, Մինք Մեր Հայրենիքում պետական և հասարակական կեանքի կանոնաւոր ընթացքը հաստատուն դարձնելու նպատակով, անյետաձգելի ենք համարում.

1) իսկական միջոցներ ձեռք առնել պաշտպանելու համար օրէնքի լիակատար ոյժը՝ Ինքնակալ Պետութեան մէջ Գահի ամենակարեւոր այդ նեցուկը,—որպէսզի օրէնքի անխախտ և ամենքի համար միատեսակ գործադրութիւնը համարուի Մեզ ենթակայ բոլոր իշխանութիւնների և տեղերի ամենաառաջին պարտականութիւնը, իսկ նրա չգործադրելը անխուսափելիօրէն հետևեցնէ է իւրաքանչիւր կամայական գործողութեան համար օրինական պատասխանատուութիւն, և այդ նպատակով՝ այդպիսի գործողութիւններից տուժած անձերի համար դիւրացնել արդարագատութեան հասնելու եղանակները.

2) թոյլատրել զեմսովային և քաղաքային հիմնարկութիւններին ըստ կարելոյն լայն մասնակցութիւն տեղական բարեկարգութեան դանազան կողմերը վարելու գործում, շնորհելով նրանց դրա համար անհրաժեշտ, օրինական սահմաններում, ինքնուրոյնութիւն, և գործունէութեան հրաւիրել այդ հիմնարկութիւններում, միատեսակ հիմունքներով, տեղական գործերում շահագրգռուած ազգաբնակչութեան բոլոր մասերի ներկայացուցիչներին. և ազգաբնակչութեան կարիքներին աջողագոյն կերպով գոհացում տալու դիտաւորութեամբ, ներկայումս գոյութիւն ունեցող նահանգական և գաւառական զեմսովային հիմնարկութիւններից բացի, դրանց հետ սերտ կապակցու-

թեամբ կազմել հասարակական հաստատութիւններ՝ փոքրածաւալ գաւառամասերում տեղական բարեկարգութեան գործերը վարելու համար.

3) դատարանի առաջ բոլոր դասերի անձանց հաւասարութիւնը պաշտպանելու նպատակով, մտցնել հարկաւոր միութիւն Պետութեան դատարանական մասի կազմակերպութեան մէջ և ապահովել բոլոր աստիճանների դատական հաստատութիւններին անհրաժեշտ ինքնուրոյնութիւն.

4) մեծ ու փոքր դործարաններում և հանքատեղերում բանուորների վիճակը ապահովեցնելու նպատակով Մեր արդէն ձեռք առած միջոցները աւելի առաջ տանելով հոգալ բանուորների պետական ապահովագրութիւն մտցնելու մասին.

5) վերաքննել հասարակական կարգի թշնամիների յանցաւոր դործունէութեան անօրինակ արտայայտութեան. ժամանակներում հրատարակուած բացառիկ օրէնդրութիւնները, որոնց գործադրութիւնը կապուած է աղմինիստրատիւ իշխանութիւնների հայեցողութեան մեծապէս ընդարձակման հետ, և միաժամանակ հոգ տանել թէ ըստ կարելոյն սահմանափակելու շրջանները այն տեղերի, որոնց վրայ տարածուած են բացառիկ օրէնքները, և թէ թոյլատրելու այդ բացառիկ օրէնքների պատճառով մասնաւոր անձանց իրաւունքների սեղմումները միայն պետական անվտանգութեան իսկապէս սպառնող դէպքերում.

6) ամրապնդելու համար 1903 թ. փետրուարի 26-ին Մանիֆեստում արտայայտած Մեր անշեղ հոգեկան ցանկութիւնը՝ պահպանել Պետութեան հիմնական օրէնքներով սրբազործուած համբերատարութիւնը հաւատքի գործերում, — վերաքննութեան ենթարկել ուրա հերձուածողների, ինչպէս և ոչ-ուղղափառ և այլակրօն դաւանութիւններին պատկանող անձանց իրաւունքների մասին օրէնքները, և անկախ դրանից ձեռք առնել այժմ և եթ աղմինիստրատիւ կարգով համապատասխան միջոցներ՝ հեռացնելու նրանց կրօնական կենցաղում ուղղակի օրէնքի մէջ չսահմանուած ամեն մի սեղմում.

7) կատարել վերաքննութիւն այլազգիների և կայսրութեան առանձին մասերի բնակիչների իրաւունքները սահմանափակող գործածական որոշումները այն պայմանով, որ այդ որոշումների թուից այսուհետև պահպանուած լինեն միայն նրանք, որոնք առաջանում են Պետութեան էական շահերից և Ռուս ժողովրդի ակներև օգտից, և

8) հեռացնել մամուլի նկատմամբ այժմ գործադրուող

որոշումների միջից աւելորդ սեղմումները և դնել տպագրական խօսքը օրէնքով ճիշտ որոշուած սահմաններում, այդպիսով հայրենի մամուլին,—լուսաւորութեան գործի և դրա առաջադիմութեան հետևութեամբ մամուլին պատկանող նշանակութեան համեմատ,—տալ հնարաւորութիւն արժանապէս կատարելու իր բարձր կոչումը—լինել ճշմարիտ արտայայտիչ խելացի ձեռք-տումների յօգուտ Ռուսաստանի:

Այս հիմունքների վրայ նախացուցանելով մերձագոյն ապագայում լինելիք խոշոր ներքին վերանորոգութիւններ, որոնց մի մասը, աւելի առաջ տուած Մեր ցուցմունքների համաձայն, արդէն սկզբնական հետազօտութեան է ենթարկուած, Մենք դրա հետ միասին, ի նկատի ունենալով այդ վերանորոգումների զանազանակերպութիւնը և լրջութիւնը, բարուք ենք համարում սահմանել նոյնիսկ կարգը՝ քննելու համար վերանորոգումների աւելի արագ ու լիակատար իրագործման եղանակները: Մեր պետական հաստատութիւնների շարքում կառավարման առանձին մասերի ամենասերտ միացման խնդիրը պատկանում է մինիստրների կոմիտեոյին. հետևաբար հրամայում ենք. մինիստրների կոմիտեոյին վերև բերած իւրաքանչիւր առարկայի առիթով քննութեան առնել Մեր դիտաւորութիւնները կեանքի մէջ մտցնելու լաւագոյն եղանակի հարցը և ներկայացրնել Մեզ ամենակարճ միջոցում իր եզրակացութիւնները՝ սահմանուած կարգով հարկաւոր ձեռնարկութիւններին ընթացք տալու մասին: Յիշած գործերի մշակութեան յետագայ ընթացքի մասին կոմիտեոյը ունի զեկուցանելի մեզ:

Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է:

ՆԻԿՈՂԱՅ

Յարսկոյէ Մէլօ, 1904 թ., դեկտեմբերի 12-ին:

—Բարձրագոյն Րեւիրիպտ Կովկասի Կառավարչապետ եւ Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի նշամանատար գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Ս. Գոլիցինի անունով:

Քիշխան Գրիգորիյ Սէրգէեիչ, գնահատելով ձեր երկար տարիներում ձեռք բերած փորձառութիւնը ծառայութեան մէջ, եւ 1896 թուին նշանակեցի ձեզ Կովկասի Կառավարչապետ, Կովկասեան զինուորական շրջանի զօրքի հրամանատար և կովկասեան կազակ զօրքերի ատաման: Ձեզ յատուկ հաստատակամութեամբ և ուղղութեամբ, դուք այն օրից սկսած անխոնջ աշխատում էիք Կովկասեան լայնարձակ երկրի բարձր վարչութեան ասպարէզում, ձգտելով ամրապնդել այնտեղ կարգ ու կանոնը, քաղաքացիութիւնը և նրա ամենասերտ միացումը:

կայսրութեան հետ: Մի և նոյն ժամանակ դուք պակաս խնամք գործ չը դրիք կարգաւորելու և պահպանելու կովկասեան դօրքերի պատերազմական պատրաստութիւնը: Ութամեայ լարուած զբաղումներից՝ յոգնածութիւնը դրդեց ձեզ այժմ խնդրել, որ ազատեմ ձեզ հովկասում ձեր ունեցած պաշտօններից: Ցաւելով զիջանելով այդ թախանձանքին, յոյս ունենալով ապագայում կաղզուրուած տեսնել ձեր ուժերը, ես արդարացի եմ համարում յայտնել ձեզ հոգեկան երախտապարտութիւն ձեր հայրենասիրական, արիւննով դրոշմուած գործունէութեան համար հովկասեան երկրի օգտին: Ձեր ծառայութիւնները, որ վկայում են ձեր անձնուէր հաւատարմութիւնը Գահին, ձեզ իրաւունք են տալիս Ինձ առանձնապէս մօտ լինելու, որի ակնհերև նշանը թող լինի ձեր նշանակուելն Իմ Անձիս ծառայութեան մէջ: Մնում եմ ձեզ անփոփոխ բարեացակամ և շնորհակալ:

«Նիկոլայ»

Ինչպէս յայտնի է, նախկին մինիստր Յոն-Պլեյէի օրօք բիւրօկրատիական հայեցողութեան և պոլիցիական կամայականութեան վրայ հիմնուած կառավարական սխտեմը հասաւ իր գագաթնակէտին, ամեն քայլափոխում ցոյց տալով թէ ո՞ր աստիճան անգոր է օրէնքը ապահովել Ռուսաստանում անհատի մարդկային և քաղաքացիական իրաւունքները: Հասարակութեան զարթած գիտակցութիւնը ելք էր որոնում այդ ստակալի իրականութիւնից և անա նրա պահանջներին ընդ առաջ գնաց ներքին գործոց նոր մինիստր Սվետոպոլկ-Միրսկին, որի նշանակումը, ինքն ըստ ինքեան ապացոյց էր, որ ամենաբարձր շրջաններում էլ այլևս համակրութիւն չէր վայելում երկիր կառավարելու Պլեյէեան սխտեմը: Դեկտեմբերի 12-ին յայտարարած Բարձրագոյն Ուկազը, որի ճիշտ թարգմանութիւնը մենք առաջ ենք բերում վերևում, բացորոշ կերպով դատապարտում է այն սխտեմը, որի մէջ իբրև հիմք չի ընդունուում «ինքնակալ պետութեան ամենագլխաւոր նեցուկը՝ օրէնքը»: Այդ Ուկազի մէջ նախագծուած են մի շարք կարևոր ներքին բեֆորմներ, որոնք իրագործուելով պէտք է մտցնեն Ռուսաստանում ևս անհատի այն տարրական իրաւունքները, առանց որոնց անկարող են կանոնաւոր զարգանալ քաղաքակիրթ հասարակութիւնները: Թէ որ աստիճան ապահովուած չէ Ռուսաստանում արդարապետութիւնը, այդ երևում է ոչ միայն նրանց որ ադմինիստրացիային տրուած էր լիազօրութեան իր հայեցողութեամբ դատավճիռներ կայացնելու, այդ երևում է ոչ միայն այն կիսա-իրաւագործ կացութիւնից, որի մէջ դանուում է Ռուսաստանում, 1905.

տանի ազգաբնակութեան 90⁰/₀—գիւղացիները, այլ և իւրաքանչիւր օր այստեղ կամ այնտեղ կատարուած կամայականութիւններից նոյն իսկ դատարաններում Ո՞վ չգիտէ, օրինակ, Քիշնեի և Գոմէլի հրէական քստմնելի ջարդերի առիթով դատաստանական գործիչների ցոյց տուած կոպիտ աչառութիւնը.—առանց քաշուելու չինովնիկ դատաւորները զրկում էին հրէաների պաշտպաններին միջոցներից՝ երևան հանելու լիակատար ճշմարտութիւնը: Ով չի կարդացել առանց սարսուռի այն վայրագութեան մասին, որին ենթարկուել էր բժիշկ Չարուսով Ասխարադում գեներալ Կովալեովի կողմից: Անզրկասպեան կոզակների այդ գլխաւորը, նոյն երկրի կառավարչի տեղակալը ինչ որ անձնական միտումով իր մօտ է հրաւիրում հեռախօսով բժիշկ Չարուսովին և հրամայում եօթ կազակի՝ մերկացնել և նախօրօք պատրաստած «րոզգիներով» (ճիւղտներով) չարաչար ծեծել նրան: Գեներալին դատի են ենթարկում. գործի քննութիւնը կատարում են թիֆլիսում և ոչ Ասխարադում, ուր կատարուած էր յանցանքը և ապրում էր յանցաւորը: Քննութեան ժամանակ դատաստանի նիստին չեն հրաւիրուում ոչ տուժողը՝ բժիշկը, և ոչ վկաները, այլ միայն կարդացուում է գեներալի մասին լաւ վկայութիւններ պարունակով նամակներ երկու այլ գեներալների կողմից: Յանցաւորը ամենաթեթեւ պատժի է դատապարտուում—արձակուում է պաշտօնից, չզրկուելով և ոչ մի իրաւունքից: Բնականաբար այդ վճիռը վրդովեց հասարակական խիղճը ամբողջ Ռուսաստանում, բուն ցաւակցական խօսքեր լսուեցան բժշկի հասցէին և գարշանք ըրան տանջողի անունին: Այդ դէպքը ցոյց է տալիս թէ ինչ խոր ներքին ցաւ է շոշափում Բարձրագոյն Ուկաղը, շեշտելով որ «օրէնքի անխախտ և բոլորի համար միակերպ կատարումը պիտի համարուի Մեզ ենթակայ բոլոր իշխանութիւնների և տեղերի ամենաառաջնակարգ պարտականութիւն»:

Մնում է որ մինիստրների կոմիտեաը մշակի անհատի իրաւունքները լիակատար կերպով ապահովող իսկական միջոցներ և երբ habeas corpus-ը կը դառնայ մեր իրականութեան անսասան հիմք այն ժամանակ թէ գրուած օրէնքների հեղինակութիւնը կը բարձրանայ և թէ ներքին կեանքը մեծ թափով կը սկսի ընթանալ այն նոր շաւղով, որ բացուում է լայնածաւալ, բազմացել և բազմակրօն Ռուսաստանի առաջ: Այդ է պատճառը որ այժմ բոլորի ուշադրութիւնը գրաւում են մինիստրների կոմիտեայի նիստերը Պետերբուրգում: Լ. Ս.

— Պաշտօնական հաղորդագրութիւն՝ Մոսկուայում տեղի ունեցած անկարգութեան մասին: Նոյեմբերի 28-ին Պետերբուրգում, Նեվսկի Պրոսպեկտի վրայ տեղի ունեցած փողոցային անկարգութիւններից յետոյ, Մոսկուայում ուսանող երիտասարդութեան մէջ սկսուեց եղանդուն ազիտացիա՝ մայրաքաղաքումն էլ անկարգութիւններ կազմակերպելու նպատակով: Երիտասարդութեան այս ադամադրութիւնից օգտուեց այն կազմակերպութիւնը, որ ինքն իրան անուանում է «Սոցիալ-բեվոլիւցիոներների Մոսկուայի յանձնաժողով»: Շուտով երևացին կոչաթերթեր, որոնք տարածուեցին քաղաքի զանազան մասերում, և որոնց միջոցով հրաւիրուեցին դեկտեմբերի 5-ին և 6-ին կայանալիք ցոյցերին: Ցերեկուայ 12 ժամին նկատուեց հասարակութեան անսովոր շարժում Ստրաստնոյ հրապարակի մայթերի վրայ, մինչև Չերնիշեվսկի փողոցը. զբոսնողներն բաղկացած էին ամբողջապէս ուսանողներից և ուսանողուհիներից: Ցերեկուայ 2 ժամին Տվերսկի փողոցի վրայ գոյացաւ արդէն նշանաւոր բազմութիւն, որի միջից լուեց յեղափոխական բովանդակութեամբ երգեցողութիւն: Բացուեցին դրոշակներ՝ հակակառավարչական մակագրութիւններով: Այս ամբոխը կուռի բընուեց իր դէմ ուղղուած ոստիկանական խմբերի հետ, գործ դնելով գաւազաններ, երկաթի ձողեր և մահակներ: Ոստիկանութեան վրայ կրակ բացուեց բեվոլվէրներից: Ոստիկանութիւնը ստիպուեց սրբըը մերկացնել: Ոստիկանութեան խումբը ցրեց ամբոխը և խլեց դրոշակները: Անկարգութիւններ առաջացնելու նոյնպիսի փորձեր կրկնուեցին քաղաքի ուրիշ մասերում ևս, բայց այս տեղերում էլ ոստիկանութիւնը անմիջապէս ցրուեց ցոյց անողներին: Աղմուկի ժամանակ լուրջ խեղդմանը չեն պատահել, և ինչպէս քննութիւնից երևաց, միայն 9 թեթև վիրաւորվածներ են եղել ցուցարարների մէջ և 12 դէպք ոստիկանութեան մէջ, որոնցից երկուսը՝ հրազէնքից առաջացած: Բռնուածներից 43 հոգի, աւելի յանցաւորներ՝ կալանաւորուած են և մասամբ կենթարկուեն դատաստանի, իսկ մասամբ պատասխանատուութեան այն բանի մէջ, որ խախտել են Մոսկուայի գէներալ-նահանգապետի պարտադիր կարգադրութիւնը փողոցային անկարգութիւնների վերաբերմամբ: Միւս բռնուածներն՝ անկարգութիւնները վերջանալուց յետոյ անմիջապէս արձակուեցին: Դեկտեմբերի 6-ին փորձ եղաւ անկարգութիւնները վերանորոգել Ստրաստնոյ հրապարակի վրայ, բայց ոստիկանութիւնը ցուցարարներին շրջապատելով խանգարեց: Վերջիններից 22 աւելի յանցաւորները կենթարկուեն կալանաւորման՝ գումարումների մասին կարգադրութիւնը խախտելու պատճառով:

— Բազուի գործադուլը «Кавказъ» պաշտօնական լրագրից: «Երկուշաբթի» օրը, դեկտեմբերի 13-ին, առաւօտեան ժամը 6-ին, Բազուի նաւթաշրջանում սկսուեց բանուտրների գործադուլ: Բանուտրները, փչացնելով Բազու-Բալախանի հեռախօսի գրծերը, դադարեցրին հեռախօսային հաղորդակցութիւնը, իսկ «Կասպիական-Սեւովեան» նաւթահանքում փչացրին այն մեքենաները, որոնք ծառայում են տները տաքացնելու համար: Բիբի-Նէյրաթի նաւթահանքերում նոյնպէս սկսուեց գործադուլ: այդտեղ բանուտրները հեռացան, բաց թողնելով բոլոր կաթսաներից շոգիները: Չը նայելով անմիջապէս ձեռք առնուած միջոցներին, հետեւեալ օրերը գործադուլն սկսեց զարգանալ և ներկայումս տարածուած է ամեն տեղ, թէ նաւթահանքերում և թէ Բազու քաղաքում: Լրագիրները դադարեցին լոյս տեսնելուց: Շատերը չեն գործում, ձիաքարշի շարժումը դադարել է: Բալախանի բանուտրների խմբերը գնում են նաւթահանքերն ու գործարանները և պահանջում, որ աշխատանքները դադարեցնեն. կաթսաներից շոգին բաց են թողնում: Բայց երբ ոստիկանութիւնը կամ զինուորական պահակները մօտենում են, բանուտրներն արագութեամբ ցրւում, անհետանում են:

Մինչև այժմ գործադուլ անողների և ոստիկանութեան կամ զօրքերի միջև առանձին ընդհարումներ չեն եղել. միայն մի ոստիկանի վերարկուն ծակել են ատրճանակի մի հարուածով:

Վերջին օրերի ընթացքում գործադուլը տարածուել է «Արևելեան Ընկերութեան» և «Նադեժդայի» արհեստանոցներում: Դեկտեմբերի 17-ին, ուրբաթ օրը, դադարեցին գործելուց և Միրզաբէկեանի ծխախոտի գործարանի, «Կաւկազ-Մերկուրի» շոգենաւային ընկերութեան արհեստանոցների և Դադաշեվի նաւամատոյցի բանուտրները: Այդ վերջինում գործադուլ արած բանուտրները ֆլասել են մի քանի մեքենաներ, իսկ «Կաւկազ-Մերկուրի» հայաթի մեծ դռներն են կտորատել: Ձեռք առնուած միջոցներով ցրուեցին խառնակութիւն առաջացնող բանուտրներին, իսկ մի մասին էլ ձերբակալեցին, մինչև որ իմացուի նրանց մեղաւորութեան չափը:

Բիբի-Նէյրաթում և Բալախանիում գործադուլ անողները ժողովներ արին. վերջին ժողովին մաս աւակցում էին 30,000 հոգի, որոնք սկսեցին խմբերով Բալախանի վերադառնալ, երբ ոստիկանութիւնը մօտեցաւ, նրանք տեսնելով մօտից անցնող գնացքը, քարերով փշրեցին վազոնների լուսամուտաները:

Դեկտեմբերի 17-ին Բազուի լրագիրները նորից լոյս տեսան:

Ժողովին մասնակցող ձերբակալուած բանուորներից, յանցանքերը պարզելուց յետոյ, բանտարկուեցին 14 հոգի զանազան ժամանակով:

Դեկտ. 23-ին, երբ Սև, Սպիտակ քաղաքներում աշխատանքներն արդէն վերսկսուած էին, Բալխանիում, կէսօրից յետոյ ժամը 3-ին կազակների պահակը շրջապատուեց մի մեծ խումբ ընկուտրներով, որոնք սկսեցին նեղել կազակներին, քարեր նետել նրանց վրայ և նոյն իսկ կրակ անել: Պահակին ազատելու հասաւ կէս հարիւրեակ կազակ, որը մի քանի անգամ նախազգուշացուցնէից յետոյ, ստիպուած եղաւ կրակ բաց անել. ապստամբներից սպանուեցին 3 հոգի և վիրաւորուեցին 5 հոգի: Կազակներից 4 հոգի թեթև վէրքեր ստացան, բայց մնացին շարքերում: Միևնոյն օրը Բիբի Հէյբաթում անկարգութիւններ տեղի ունեցան, բանուորների ամբոխը յարձակուեց ոստիկանական պահապանների վրայ. բանուորներին խաղաղացնելու գործում մի հոգի սպանուեց և վիրաւորուեցին մի քանի հոգի: Բալխանում և Բիբի Հէյբաթում ընդամենը վիրաւորուած են 20 հոգի: Դեկտեմբերի 24-ին Բալխանիում այրուեցին 22 վիշկաներ, իսկ դեկտեմբերի 26-ին նորից 20 վիշկա: Դեկտեմբերի 23-ին նաւթահորերի և քաղաքի միջև վերսկսուած հեռախօսային յարաբերութիւնը դեկտեմբերի 24-ին նորից դադարեց:

—Սոշոր բանուորական գործադուլի պատճառով Պետերբուրգում մի քանի օր յունուարի 8-ից—10-ը լոյս չեն տեսնում թերթերը:

—Անկարգութիւններ Պետերբուրգում: (Պաշտօնական): 1904 թուի սկզբին, Պետերբուրգի ֆաբրիկաների և գործարանների մի քանի բանուորների միջնորդութեան համաձայն, հաստատուեց օրինական կարգով Պետերբուրգի ֆաբրիկային և գործարանային բանուորների ընկերութեան կանոնադրութիւնը, որի նպատակն էր բաւարարութիւն տալ նրանց հոգեկան և մտաւոր շահերին և հեռու պահել բանուորներին յանցաւոր պրոպագանդայի ազդեցութիւնից: Այդ ընկերութիւնը, որ ընտրել էր նախագահ Պետերբուրգի փոխադրական բանտի քահանայ Գէօրգի Գապոնին, գործարանական բոլոր շրջաններում, տարածուելուն համեմատ սկսեց զբաղուել առանձին ֆաբրիկաներում և գործարաններում բանուորների և տէրերի միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւնների քննութեամբ և ապա անցեալ տարուայ դեկտեմբերի ամսին դրդեց Պուտիլովեան գործարանի բանուորներին միջամտել գործարանից չորս բանուորներ արձակելու հարցում, որոնցից մի քանիսները, ինչպէս

վերջը երևաց, մինչև անգամ արձակուած չէին, այլ թողել էին պարագլուխները կամաւոր: Այնուամենայնիւ, գրգռուելով քահանայ Գապոնի և վերոյիշեալ ընկերութեան անդամների կողմից, Պուտիլովեան գործարանի բանուորները յունուարի 3-ին դադարեցրին աշխատանքները և բացի իրանց ընկերներին վերադարձնելու պահանջից, նոյն ազիտացիայի ազդեցութեան տակ, պահանջներ արեցին, որպէսզի փոխուի պաշտօն տալու, աշխատանքների գնահատութեան և արձակելու կարգը: Գործարանային տեսչութեան կողմից արած յորդորական միջոցները աջողութեամբ պսակուեցին և գործադուլին, նոյն անձանց ազդեցութեան տակ, գլխովին միացան Պետերբուրգի մի քանի այլ խոշոր գործարանների բանուորները, և ապա գործադուլը սկսեց արագ տարածուել, բռնելով մայրաքաղաքի բոլոր գործարանային ձեռնարկութիւնները, այնպէս որ գործադուլի տարածման համեմատ աճում էին և բանուորների պահանջները: Գրաւոր կերպով արտայայտուած այդ պահանջները, որ մեծ մասամբ կազմել էր Գապոն քահանան, տարածուած էին բանուորների մէջ: Առաջ նրանք վերաբերում էին առանձին ֆարերիկների և գործարանների տեղական անձանց և հարցերին, իսկ յետոյ անցան ընդհանուր հարցերին. բանուորի օրական ութ ժամուայ աշխատանքի և բանուորական կազմակերպութիւնների մասնակցութեան մասին՝ բանուորների և տէրերի միջև եղող վէճերը լուծելու հարցում և այլն: Գործադուլի ենթարկուած արդիւնաբերական հաստատութիւնների տէրերը, խորհուրդ գումարուելով, ընդունեցին, որ բանուորների մի քանի պահանջներին գոհացում տալը կարող է բոլորովին քանդել ուսաց արդիւնաբերութիւնը, իսկ միւս պահանջները կարելի է ջննել և մասամբ գոհացնել իւրաքանչիւր առանձին ձեռնարկութեան ուժի չափ. բայց մի և նոյն ժամանակ, պատրաստականութիւն յայտնելով բանակցութիւններ սկսելու բանուորների հետ, տէրերը անկարելի համարեցին այդ, եթէ հարկ լինի բանակցել կազմակերպուած գործադուլ անողների ամբողջութեան հետ և ընդունեցին, որ համաձայնութիւն կարելի է կայացնել միայն առանձին-առանձին գործարանների բանուորների հետ: Պահանջների քննութեան այս եղանակից բանուորները հրաժարուում էին: Ի նկատի ունենալով, որ գործադուլի ժամանակ կարգապահութիւնը չէր խանգարուում, իշխանութիւնները ոչ մի ստիպողական միջոցների չէին դիմում և գործադուլն սկսուելուց ոչ մէկը չէ ձերբակալուել և ոչ ոք չէ խուզարկուել բանուորական շրջանում: Սակայն գործարանական բանուորների ընկերութեան ազիտացիային շուտով աւելացան

նաև գաղտնի յեղափոխական շրջանների ղրղումները՝ Հէնց ինքնն աչդ ընկերութիւնը, Գապոն քահանայի առաջնորդութեամբ, յունուարի 8-ի առաւօտից սկսեց բացարձակ կերպով յեղափոխական մտքեր քարոզել։—Այդ օրը Գապոն քահանան կազմեց ու տարածեց ազերսագիր բանուորների կողմից՝ ուղղած Բարձրագոյն Անուան և այդ աղերսագրում աշխատանքի պայմանները փոփոխութեան ենթարկելու ցանկութիւնների հետ առաջ էին բերուած քաղաքական բնաւորութիւն ունեցող յանդուգն պահանջներ։ Բանուորական շրջարաններում լուր էր տարածուած և ձեռքէ ձեռք էին անցնում գրաւոր յայտարարութիւններ, որոնք ղըրղում էին անպատճառ հաւաքուել յունուարի 9-ին, կէսօրուայ մամի 2-ին, Պալատական հրապարակի վրայ և քահանայ Գապոնի միջոցով ներկայացնել Կայսրին մի խնդրագիր՝ բանուոր դասակարգի կարիքների մասին։ Այդ յայտարարութիւնների մէջ ոչ մի խօսք չէր ասուած քաղաքական բնաւորութիւն ունեցող պահանջների մասին։ Բանուորների մեծամասնութիւնը մոլորեցրուած էր և չգիտէր թէ ի՞նչ նպատակով էր հրաւիրուած Պալատական հրապարակը։ Փանատիկոս քարոզչութիւնը, որ՝ մոռանալով իր կոչման օրբութիւնը, անում էր Գապոն քահանան, և չարամիտ անձնաւորութիւնների յանցաւոր ագիտացիան՝ այն աստիճան զրգոնցին բանուորներին, որ նրանք, յունուարի 9-ին, ահագին խմբերով սկսեցին դիմել քաղաքի կենտրոնը։ Մի քանի կէտերում տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ բանուորների և զօրքերի միջև, որովհետև ամբոխը յամառութեամբ դիմադրում էր ցրուելու հրամաններին, իսկ երբեմն նաև յարձակում էր զօրքերի վրայ։ Չօրքերը ստիպուած էին կրակ անել բանուորների վրայ։ Շլիսսէլրուրգեան ճանապարհին, Նարվեան դարպասի մօտ, Տրօյցկի կամուրջի վրայ, Վասիլէվսկու կղզու 3-դ գծի և Փոքր պրոսպէկտի վրայ, Ալէքսանդրեան պարտէզի մօտ, Նեսկի պրոսպէկտի անկիւնի մօտ, Գոզոլի փողոցում, Պոլիցէյսկի կամուրջի մօտ և Կաղանեան հրապարակի վրայ։ Վասիլէվսկի կղզու 4-դ գծի վրայ ամբոխը մաֆթուլից և տախտակներից շինել էր երեք բարրիկադ և բարձրացրել էր կարմիր դրօշակ։ Հարևան տների պատուհաններից քարեր էին նետում և հրացաններ էին արձակում զօրքերի վրայ։ Ոստիկանների ձեռքից ամբոխը խլում էր թրեր և զինուում։ Կողոպտեց Շաֆֆի զինագործարանը և յափշտակեց մզո հարիւր պողպատէ սրի բերաններ, որոնց սակայն մեծ մասամբ աջողուեց յետ խելի։ Վասիլէվսկի մասի առաջին բաժնում ամբոխը կտրտեց հեռախօս թելերը և վայր գցեց սիւները։ Վասիլէվսկի մասի երկրորդ ոստիկանական

բաժնի շինութեան վրայ յարձակումն գործեցին: Բաժնի կայարանը շարդուփշուր է արուած: Երեկոյեան Պետերբուրգի կողմի Մեծ և Փոքր պրոսպեկտների վրայ կողոպտուեցին հինգ խանութներ: Հրաձգութիւնից ֆրասուածների ընդհանուր քանակութիւնը, հիւանդանոցների հայթայթած տեղեկութիւնների համաձայն, երեկոյեան ժամը 8-ի մօտ, կազմում են 76 հոգի սպանուած, որոնց թւում ոստիկանական վերակացուն և վիրաւորուած՝ 233 հոգի, որոնց թւում ծանր վիրաւորուած է պրիստավի օգնականը և թեթև վիրաւորուած մի ժանդարմ և մի ոստիկան: Յունուարի 10-ին քաղաքի պահպանութեան համար նոյն միջոցները ձեռք առնուեցին, ինչպէս յունուարի 9-ին:

— Յունուարի 11-ից տպուած էր հետեւեալ հեռագիրը. «Պետերբուրգում յունուարի 10-ի ընթացքում անկարգութիւն առաջացնող ամբոխի և զօրքի միջև ընդհարում տեղի չունեցաւ, և զինուորական կոմանդանտներն ստիպուած չեղան զէնքի դիմելու, որովհետև զօրքը երևալուն պէս ամբոխը ցրուում էր: Ցերեկով փորձ արուեց «Գոստինիյ դվորի» վրայ յարձակուելու, բայց իր ժամանակին նախատեսուեց: Երեկոյեան դէմ գործադուլին միացան էլէքտրական կայարանի բանուորները և մթութիւնից օգտուելով, առանձին խմբեր սկսեցին կոտորատել զանազան փողոցներում վաճառատների լուսամուտները, բայց ամեն տեղ կարգը արագութեամբ վերահաստատուեց: Յունուարի 10-ին սպանուածներ և վիրաւորներ չեղան: Յունուարի 9-ին, ստոյգ հաշուից երևում է, որ եղել են 96 սպանուած և 333 վիրաւոր, որոնցից 58 հոգի ցուցակագրուած են ամբուլատորային կայարաններում»:

— Շուշուց եկել էր Թիֆլիս մի պատուիրակութիւն, 9 հոգուց բաղկացած, ներկայանալու Կովկասի կառավարչապետի պաշտօնակատարին և խնդրելու Շուշու տեղական մի քանի անյետաձգելի կարիքների համար: Այդ կարիքներից ամենապլսաւորն է այն, որ Շուշում կատարուած վերջին սպանութիւնների համար (ոստիկանապետ Սախարովի, Շչէրբակովի և ուրիշների) վճուած էր էկզեկուցիա նշանակել քաղաքի վրայ. արդէն ուղարկուած էր 350 հետևակ և 250 կազակ, որոնք 2 ամիս պէտք է ֆային Շուշում և ապրէին քաղաքի հաշուով: Ամսիս 8-ին յիշուած պատգամաւորութիւնը ներկայացաւ զենեքալ-լէյտէնանտ Մալամային, յայտնեց քաղաքի խնդիրը և կառավարչապետի պաշտօնակատարը խոստացաւ յունուարի 11-ին վերացնել Շուշում նշանակուած էկզեկուցիան:

— Դեկտեմբերի 3-ին Չէնիգովի նաճանգի չէրնիգովեան

նահանգական զէմստվօի ժողովի նախագահ ազնուականութեան պարագլուխը ներկայացրեց հեռագրով Նորին Կայսերական Մեծութեան վերոյիշեալ ժողովի միջնորդութիւնը ընդհանուր-պետական ընաւորութիւն ունեցող մի ամբողջ շարք հարցերի վերաբերմամբ: Այդ հեռագրի վրայ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց Մեփական Ձեռքով գծագրել: «Ձէրնի-զովեան նահանգական զէմստվօի ժողովի նախագահի վարմունքը զսնումեմ յանտուզն եւ անտակտ: Ձէմստվօի ժողովների գործը չէ զբաղուել պետական վարչութեան հարցերով, որոնց գործունէութեան եւ իրաւունքների շրջանը պարզ որոշուած է օրէնքներով»:

—«НОВОСТЕ» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրը Պետերբուրգի Տնտեսագիտական ընկերութեանը իրաւունք է տուել տնտեսական հարցերի մասին գիտական զեկուցումներ կարդալու: Երկու տարի առաջ այդ իրաւունքից զրկուել էր ընկերութիւնը:

—Երբ Պետերբուրգի քաղաքապետը յանկարծ հրաման ստացաւ անցեալ տարի փակել տեխնիկական և արհեստագիտական կրթութեան համաժողովը, սէնատոր Տուրաուին յանձնուեց խօսկոյն քննութիւն կատարել այդ առիթով: Նա խօսկոյն պահանջեց համաժողովի կոմիտէտից նիստերի բոլոր արձանագրութիւնները, վճիռները, բոլոր անդամների ցուցակները—մի խօսքով կոմիտէտի տրամադրութեան տակ եղած բոլոր նիւթերը: Այժմ «Речь»-ի ասելով, քննութիւնը վերջացել է և պէտք է կարծել, որ մեղադրական ոչ մի զբական փաստ չէ տուել, որովհետև համաժողովի կոմիտէտին թոյլատրուած է յետ վերցնել իր բոլոր թղթերը: Կոմիտէտը մտադիր է շուտով սկսել նրանց տպագրութիւնը: Մէնատոր Տուրաուին յանձնուած էր նոյնպէս քննելու բրժիշկների Պիրագովեան վերջին համաժողովի և Մոսկուայում անցեալ տարի ուսուցիչների ունեցած համագումարի գործերը: Ինչպէս յայտնի է, այդ երկու համաժողովների առիթով էլ խառնակութիւններ ծագեցին:

—Ներքին գործոց մինիստրը թոյլատրել է Բագուի մարդասիրական Ընկերութեան՝ բանալ փակուած գրադարանը:

—Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատարը կարևոր համարեց անորոշ ժամանակով արգելել Կովկասի սահմաններում բնակուել՝ Սուրմալու գաւառի Մոլլա-Գոմար և Գիւլիջա գիւղերի հետեւալ 9 անձերին. Կարպետ Յովհաննիսեանին, Աստուածատուր Ամիրխանեանին, Ալէքսանդր Յովհաննիսեանին, Մնացական Մխիթարեանին, Սըբատ Տէր Յովհաննիսեանին, Սարգիս Յովակիմեանին, Աւետիս

Մուրադեանին, Ենովք Յովհաննիսեանին և Բարաբէկ Բաղրամեանին:

Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատարը նոյեմբեր ամսի 6-ին հնարաւոր է դատել փոխելու Բագուի բնակիչ Վարգի վաճառական Համբարձում Սերգէէկիչ Մելիքեանի դէմ առնուած վարչական միջոցը, որով նրան արգելուած էր Կովկասի սահմաններում բնակուելը: Նոյն թուին փոխուած է Ալէքսանդրոպոլի բնակիչ Ստեփան Գէորգեան Տէր-Սահակեանի դէմ եղած նոյնանման վճիռը:

— Դեկտեմբերի 3-ի երեկոյեան, Թիֆլիսի Մուխրանսկի փողոցում, անյայտ սպանչի ատրճանակի երեք հարուածից սպանուած IV քաղաքամասի պրիստաւի օգնական Տէր-Սահակովի գործը հետեւեալ կերպարանքն է ստացել: Քննութիւնը ցոյց է տուել, որ սպանութիւնը կատարուած չէ խանդոտութիւնից կամ ոիրային պատմութիւնների պատճառով, այլ վրէժից: Ոստիկանութիւնը կարողացել է գտնել սպանողների հետքը: Ձերբակալուած են մի քանի հոգի, որոնց թւում է և Թիֆլիսի մեղչանին Յակոբեանը, որ վերջերս միայն ազատուել էր բանտից: Այդ Յակոբեանը, ասում է «KABK» պաշտօնական լրագիրը, գտնուում էր Իգլիբի բանտում, որովհետև կասկածում էին, թէ նա խառն է Սուրմալուի գաւառապետ Բոգոլսլաւսկու սպանութեան գործին: Նա այդ բանտից փախել եկել էր Թիֆլիս: Սրանից մօտ մէկ ամիս առաջ Տէր-Սահակովը, IV քաղամասի պրիստաւ Բաչուրինի հրամանով, «Սալչատսկի բաղար» կոչուած հրապարակում ձերբակալել էր Յակոբեանին: Բայց նրան վերջերս բանտից արձակել էին իբր անմեղ: Դրանից յետոյ նա յաճախ ման գալիս է եղել IV քաղաքամասի ոստիկանատունը զանազան պատրուակներով, իբր թէ հետեւիլիս է եղել Տէր-Սահակովին և նոյն իսկ սպառնացել է նրան:

— «KABKAB» լրագրում տպուած է. «Ներկայ դեկտեմբերի 22-ին Կովկասեան կառավարչապետի պաշտօնակատարը վաւերացրեց Երևանում եղած ժամանակաւոր զինուորական դատարանի վճիռը՝ Էջմիածնի գաւառի Իլանչալուն գիւղի բնակիչներ Գեղամ Պողոսեանցի և Սարիբէկ Գասպարեանցի մասին, որոնք մեղադրուած են իրանց համագիւղացի Սափար, Հայրապետ և Խաթուն Ալէքսանդրներին սպանելու համար: Դատարանի արձակած մահուան պատիժը գեներալ լէյտենանտ Մալամա փոխել է այսպէս. որ փոխանակ մահուան պատժի՝ Պողոսեանցը և Գասպարեանցը զրկուեն բոլոր իրաւունքներից և ուղարկուեն տաժանակիր աշխատանքների, առանց ժամանակի. միւս մասերում դատավճիռը հաստատուած է առանց փոփոխութեան»:

—Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատար Մալաման՝ ղեկտեմբերի 17-ին հաստատել է Գանձակի ժամանակաւոր ղիւնորական դատարանի վճիռը՝ փոխ-նահանգապետ Անդրէիկի սպանութեան դործի մէջ մեղադրուող 3 անձերի վերաբերութեամբ, շնեւելով հետեւեալ փոփոխութիւնները. դատարանի վճռած մահուան պատիժը Գրիգոր Դուկասեանի համար, դարձել է անորոշ ժամանակով տաժանակիր աշխատանք. Սիմէօն Ֆարաշեանի անորոշ ժամանակով տաժանակիր աշխատանքը դարձել է 20 տարով միայն, իսկ Յովհաննէս Ֆարաշեանի արդարացումը հաստատել է նոյնութեամբ:

—Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը ղեկտեմբերի 8-ին Կարսի երկաթուղով երեկոյեան գնացքով ժամանեց Թիֆլիս: Վեհափառին ղիմաւորեցին հոգեւորականութիւնը, քաղաքագլուխը, Թիֆլիսի ոստիկանապետը և բազմաթիւ հասարակութիւն:

—Մոզդուկի հայոց Վերափոխման եկեղեցու աւագ քահանայ Սոսրովեանը օր-ցերեկով սպանուեց դաշոյնի մի հարուածով: «Յ. Ո.» լրագիրն ասում է, որ ենթադրում են, թէ սպանութեան պատճառն այն մատնութիւնն է, որ արել էր Սոսրովեան քահանան տեղական միւս երկու հայ քահանաների մասին, որոնք ստիպուած եղան հեռանալ Մոզդուկից:

—Ներքին գործոց մինիստրի կարգադրութեամբ, 1904 թ. դեկտ. 21-ին «Русская Правда» լրագրին յայտնուած է երկրորդ նախագգուշացում: Դեկտ. 22-ին 1) յայտնուած է առաջին նախագգուշացում «Наши Дни» լրագրին և արգելուած է այդ հրատարակութեան հատով վաճառումը. 2) արգելուած է «Русь» լրագրի հատով վաճառումը:

Վրաց «Իվէրիա» լրագրի խմբագիր պ. Սարաջևի խնդրի համաձայն, Կովկասի գլխաւոր վարչութիւնը վճռել է թոյլատրել Գ. Ֆ. Կիպչիձէին 6 ամիս էլ շարունակելու այդ լրագրի խմբագրի պաշտօնը:

«Вакы» լրագրի խմբագիր Ա. Ն. Լավրովի խնդրի համաձայն, Կովկասի գլխաւոր վարչութիւնը թոյլատրել է, որ երգուեալ հաւատարմատար Կարապետ Առաք. Յաղուբեանը 6 ամսով վարէ այդ այժմ չհրատարակուող լրագրի խմբագրի պաշտօնը:

Թոյլատրուած են ի միջի այլոց հետեւեալ նոր պարբերական հրատարակութիւնները, առանց նախնական գրաքննչութեան. «Разсветъ» (Եշխ. է. է. Ուխտումսկուն) և «Русское Дѣло» (Շարապովին):

Ներքին գործերի մինիստրը որոշեց երեք ամսով դադարեցնել «Вессарабень» լրագրի հրատարակութիւնը:

— Դեկտ. 22-ին, կայացաւ ընդ. ժողով ոռւսաց գրական ֆոնդի, որի մասին մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսել այս էջերում: Ֆոնդի հաշուից երևում է որ նա այժմ ունի 643,671 ռ. դրամագլուխ, տարեկան մուտքը 1904 թ. եղել է 70, 526 ռ., ծախքը 114,766: Յատուկ դրամագլուխ հաշուում է 539,788 ռ.:

— Կառավարութեան կողմից հատուտուած է «Պարսից Բարեգործական ընկերութեան» Կանոնադրութիւնը: «Канон» լրագիրը հաղորդում է հետևեալ մանրամասնութիւնները այդ ընկերութեան մասին. «Մուզաֆֆէր-էզդին Շահի վերջին ճանապարհորդութեան ժամանակ, Պետերբուրգի պարօկական դեպան Մուշիր ուլ-Մուլքի նախաձեռնութեամբ կազմուեց պարսից Բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը և ներկայացուեց Շահին, որ տուեց իր հաւանութիւնը թէ Ռուսաստանում ապրող պարսիկների մէջ բարեգործական ընկերութիւն հիմնելու մտքի և թէ կանոնադրութեան ծրագրի առիթով: Այդ ծրագիրը Մուշիր-ուլ-Մուլքը ներկայացրեց ներքին գործերի մինիստրին ի հաստատութիւն: Ընկերութեան գլխաւոր վարչութիւնը պիտի լինի Թիֆլիսում, իսկ բաժանմունքները այն քաղաքներում, ուր կան պարսից հիւպատոսներ: Ընկերութեան գլխաւոր նպատակն է—բաց անել դպրոցներ աղքատ պարսիկների երեխաների համար, բաց անել հիւանդանոցներ, նպաստներ տալ աղքատ պարսիկներին հայրենիք գնալու համար և այլն»:

— «Новое Время» լրագրի մէջ տպուած էր հետևեալը. «Մենք հաստատ տեղեկութիւններ ենք ստացել, որ ոչ բոլոր բեռները հասնում են Մուկդէն և այն՝ ինչ որ ուղարկուում է այնտեղ, Պետերբուրգից, ցոյց է տալիս, որ ուրիշների ձեռքն է դիպել նրանց. կողովները դատարկ են դուրս գալիս կամ լցուած աղբով. փոխանակ հարիւր արկղի, ստացուել են երկար որոնումներից յետոյ 12-ը: Շարունակ կորչում են բանակը ուղարկած նուէրների ամբողջ վազոններ և անհետանում են թանկագին ծրարներ: Այդ բոլորը կատարուում է անդրբայկալեան և չինական երկաթուղիների վրայ: Բանակը չեն հասնում նամակներ. հեռագիրները հասնում են շարաթիւներից յետոյ»: